ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## 21 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 366-Ա

## ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքներով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 12.01.2022 թվականի թիվ 19-Ն որոշումը և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքում գործող «Համլետ Հարությունյան» ԱՁ-ի պատասխանատու անձի 10.06.2022 թվականի դիմում-հայտարարագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել «Համլետ Հարությունյան» ԱՁ-ին 01.01.2022 թվականից մինչև 31.12.2022 թվականը Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի տարածքում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառք:
2. Որոշումը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 21
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 21 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 367-Ա

## ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 12.01.2022 թվականի թիվ 19-Ն որոշումը և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն բնակավայրում գործող «ՄԵԳԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի պատասխանատու անձի 09.06.2022 թվականի դիմում-հայտարարագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել «ՄԵԳԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին 01.03.2022 թվականից մինչև 31.12.2022 թվականը Նոյեմբերյան համայնքի գյուղ Բագրատաշեն 19րդ փողոցի 63 հասցեում զբաղվել հեղուկ վառելիքի վաճառքով:
2. Որոշումը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 21
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 368-Ա

## ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, 7-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերով և 59-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի Դովեղ բնակավայրի 11-027-0018-0025 ծածկագրով, 0.55 հա մակերեսով հողամասից առանձնացնել 0.00499 հա մակերեսով (նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր) հողամաս:
2. Առանձնացված 0.00499 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից փոփոխել և դարձնել հասարակական կառուցապատման:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե գործառնական նշանակությունը փոփոխված հողամասի նկատմամբ որպես առանձին գույքային միավոր պետական գրանցում ստանալու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 21
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 369-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-021-013 կադաստրային ծածկագրով Մարշալ Բաբաջանյան փողոցում գտնվող 8-րդ բնակելի տանը տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան քաղաք Նոյեմբերյան, Մարշալ Բաբաջանյան փողոց, 8 բնակելի տուն հասցեում, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 21
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 370-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի վարչական տարածքում գտնվող 11-012-0115-0001 կադաստրային ծածկագրով 0,00241 հա հողամասին և նրա վրա առկա շինությանը տրամադրել ՀՀ Տավուշի մարզ Նոյեմբերյան համայնք քաղաք Այրում Բարեկամության փողոց ավտոտնակ թիվ 46 հասցեն (փոստային դասիչ՝ 4102):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 21
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 371-Ա

## ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի վարչական տարածքում գտնվող 11-012-0115-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.00241 հա մակերեսով հողամաս և նրա նկատմամբ որպես առանձին գույքային միավոր պետական գրանցման ներկայացնելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 21
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## 21 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 372-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի 11-043-0011-0010-001-0022 կադաստրային ծածկագրով բնակարանին տրամադրել ՀՀ Տավուշի մարզ Նոյեմբերյան համայնք բնակավայր Հաղթանակ 1 փողոց շենք 2 բնակարան 22 հասցեն (փոստային դասիչ՝ 4111):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 21
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 373-Ա

## ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԵՎ ԱԻԴԱ ՆՈՐԱՅԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 28-րդ կետով և հիմք ընդունելով «Արամայիս Ամիրաղյան» ԱՁ-ի կողմից 14.06.2022 թվականի հանութագրման և չափագրման արդյունքում տրված հողամասի իրադրական հատակագիծը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լևոն Հովհաննեսի Գասպարյանին և Աիդա Նորայելի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 11-004-0110-0041 ծածկագրով հողամասի ճշգրտված սահմանները՝ ըստ կից ներկայացվող հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 21
ք.Նոյեմբերյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 374-Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 29-ի թիվ 76-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի 2022 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 09 բաժնի 05 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4511 հոդվածից 3000000 ՀՀ դրամ գումար տեղափոխել Նոյեմբերյան համայնքի 2022 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4819 հոդված:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2022 թ. հունիսի 22
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## 23 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 375-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 48-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի 2022 թվականի բյուջեից հատկացնել դրամական նպաստներ Նոյեմբերյան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններով (այլ դասերին չպատկանող) 96 անձի, ընդհանուր 2495000 (երկու միլիոն չորս հարյուր ինսունհինգ հազար) ՀՀ դրամ գումար՝ ըստ հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 23
ք.Նոյեմբերյան

Հավելված
Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 23/06/2022
թվականի թիվ 375-Ա որոշման

## ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՑԱՆԿ

### ԱՅՐՈՒՄ ՔԱՂԱՔ

| | | |
|---|---|---|
| 1) | Պետրոսյան Նշանիկ Արտեմի | 30000 ՀՀ դրամ |
| 2) | Հովհաննեսյան Նատալյա Գարեգնի | 30000 ՀՀ դրամ |
| 3) | Ամիրաղյան Անուշ Գիգուշի | 20000 ՀՀ դրամ |
| 4) | Միրզոյան Արայիկ Ալիբեկի | 30000 ՀՀ դրամ |
| 5) | Ամիրաղյան Ռուզաննա Գիգուշի | 35000 ՀՀ դրամ |
| 6) | Հարությունյան Զինա Սուրենի | 20000 ՀՀ դրամ |
| 7) | Ղուշչյան Շուշանիկ Գառնիկի | 25000 ՀՀ դրամ |
| 8) | Դանիելյան Մայա Սուրենի | 40000 ՀՀ դրամ |
| 9) | Ղազարյան Աննա Սանասարի | 45000 ՀՀ դրամ |
| 10) | Մարգարյան Արմինե Ալիբեկի | 35000 ՀՀ դրամ |

### ԲԱՂԱՆԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| | | |
|---|---|---|
| 11) | Ալավերդյան Ջուլիետա Հայկազի | 20000 ՀՀ դրամ |
| 12) | Ավագյան Լորիկ Մեսրոպի | 25000 ՀՀ դրամ |
| 13) | Կարապետյան Անահիտ Գրիշայի | 20000 ՀՀ դրամ |
| 14) | Ալեքսանյան Վեներա Հասանի | 20000 ՀՀ դրամ |
| 15) | Բայրամյան Արաքսյա Ժորայի | 20000 ՀՀ դրամ |
| 16) | Սահակյան Հովիկ Մելիքի | 25000 ՀՀ դրամ |
| 17) | Հակոբյան Ալվարդ Սարիբեկի | 25000 ՀՀ դրամ |

### ՈՍԿԵՊԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| | | |
|---|---|---|
| 18) | Հակոբյան Նվեր Հուսիկի | 50000 ՀՀ դրամ |
| 19) | Առաքելյան Զարուհի Հրաչիկի | 20000 ՀՀ դրամ |
| 20) | Մանուչարյան Ալիսա Վոլոդյայի | 30000 ՀՀ դրամ |
| 21) | Մանուչարյան Լիլիթ Վոլոդյայի | 20000 ՀՀ դրամ |
| 22) | Բեգլարյան Արեքնազ Հարությունի | 20000 ՀՀ դրամ |
| 23) | Սարուխանյան Անյուտա Անդրանիկի | 20000 ՀՀ դրամ |
| 24) | Սարուխանյան Վազգեն Հրանտի | 30000 ՀՀ դրամ |
| 25) | Գևորգյան Թաթուլ Անզորի | 30000 ՀՀ դրամ |
| 26) | Հարությունյան Զարուհի Զուրաբի | 25000 ՀՀ դրամ |
| 27) | Ալիբեկյան Սամվել Ամիրխանի | 30000 ՀՀ դրամ |
| 28) | Բեգլարյան Նարինե Կառլենի | 30000 ՀՀ դրամ |
| 29) | Բաղալյան Սեյրան Արտեմի | 30000 ՀՀ դրամ |

### ԿՈԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| | | |
|---|---|---|
| 30) | Դավիդյան Հովսեփ Սարիմանի | 20000 ՀՀ դրամ |
| 31) | Մանթաշյան Ասյան Սուրենի | 30000 ՀՀ դրամ |

32) Եգանյան Նազիկ Վերանի 20000 ՀՀ դրամ
33) Սահակյան Զիվան Իվանի 50000 ՀՀ դրամ
34) Նազարյան Ռոզա Սարիբեկի 30000 ՀՀ դրամ

ՋՈՒՋԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

35) Անանյան Յուրիկ Եղիշի 25000 ՀՀ դրամ

ՈՍԿԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

36) Աղամյան Էլմիրա Մինասի 30000 ՀՀ դրամ
37) Աբազյան Սվետլանա Վալոդի 30000 ՀՀ դրամ
38) Շաքարյան Արևլույս Արմենակի 25000 ՀՀ դրամ
39) Ասատրյան Հռիփսիմե Վասակի 35000 ՀՀ դրամ

ԲԱՐԵԿԱՄԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

40) Մեհրաբյան Սիրվարդ Սարիբեկի 25000 ՀՀ դրամ
41) Ազիբեկյան Նարինե Հայկի 30000 ՀՀ դրամ
42) Խաչատրյան Սերինե Զիվանի 15000 ՀՀ դրամ
43) Ազիբեկյան Արուսյակ Սերգեյի 15000 ՀՀ դրամ
44) Մեհրաբյան Ռոզա Հակոբի 20000 ՀՀ դրամ
45) Ղարաքեշիշյան Սեդա Սայադի 25000 ՀՀ դրամ

ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

46) Մանուկյան Արթուր Աշոտի 20000 ՀՀ դրամ
47) Զալալյան Սմբատ Գրիգորի 20000 ՀՀ դրամ
48) Էլամիրյան Յաշա Վալոդի 30000 ՀՀ դրամ
49) Զաքիյան Ռոման Իգորի 25000 ՀՀ դրամ
50) Դանիելյան Թամարա Շուրիկի 25000 ՀՀ դրամ
51) Հայրապետյան Մելանյա Անդրանիկի 20000 ՀՀ դրամ
52) Գադյան Արթուր Աշոտի 20000 ՀՀ դրամ
53) Բաղդասարյան Ժաննա Սեյրանի 25000 ՀՀ դրամ
54) Մարալյան Սիրուշ Սամսոնի 30000 ՀՀ դրամ
55) Շահբազյան Անահիտ Արտավազդի 25000 ՀՀ դրամ
56) Ասատրյան Սամվել ռոլանդի 20000 ՀՀ դրամ

ԱՐՃԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐ

57) Մարտիրոսյան Հերիքնազ Ոսկանի 20000 ՀՀ դրամ
58) Անդրեասյան Արայիկ Աղբալի 25000 ՀՀ դրամ
59) Մուսայելյան Լուսինե Հրանտի 20000 ՀՀ դրամ

ԼՃԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

60) Խեչումյան Սուսաննա Սերոժի 30000 ՀՀ դրամ
61) Ռամազյան Արաքսյա Հրաչի 25000 ՀՀ դրամ

ԴԵԲԵԴԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| | | |
|---|---|---|
| 62) | Բալաբեկյան Սոնյա Արշակի | 25000 ՀՀ դրամ |
| 63) | Հարությունյան Էմմա Անդրեյի | 20000 ՀՀ դրամ |
| 64) | Երեմովա Ռիտա Բորիսի | 20000 ՀՀ դրամ |
| 65) | Գալստյան Ռիմա Սերոժի | 20000 ՀՀ դրամ |
| 66) | Խաչանեսյան Ռեֆսիմե Արշակի | 20000 ՀՀ դրամ |
| 67) | Քալաշյան Սուսաննա Վալիսի | 25000 ՀՀ դրամ |
| 68) | Երեմովա Արփիկ Հայկազի | 20000 ՀՀ դրամ |

ԲԵՐԴԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| | | |
|---|---|---|
| 69) | Ղազարյան Աննա Վրեժի | 25000 ՀՀ դրամ |
| 70) | Գալուստյան Սոնյա Ազատի | 20000 ՀՀ դրամ |
| 71) | Աբովյան Սևան Ալբերտի | 30000 ՀՀ դրամ |
| 72) | Գիշյան Աշխեն Լադիկի | 25000 ՀՀ դրամ |
| 73) | Աթոյան Էլիդա Սեդրակի | 20000 ՀՀ դրամ |
| 74) | Բայրամյան Անիկ Հրաչիկի | 20000 ՀՀ դրամ |
| 75) | Չիլինգարյան Սեդա Հասանի | 20000 ՀՀ դրամ |
| 76) | Խոջյան Սերյոժա Գուրգենի | 25000 ՀՀ դրամ |
| 77) | Բայրամյան Գառնիկ Դավիթի | 20000 ՀՀ դրամ |

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՔԱՂԱՔ

| | | |
|---|---|---|
| 78) | Գուլքանյան Գոհար Լևոնի | 20000 ՀՀ դրամ |
| 79) | Մաճկալյան Սամվել Դարչոյի | 30000 ՀՀ դրամ |
| 80) | Անանյան Անահիտ Սաշայի | 30000 ՀՀ դրամ |
| 81) | Անանյան Արկադի Սարիբեկի | 30000 ՀՀ դրամ |

ԿՈՂԲ ԲՆԱԿԱՎԱՅՐ

| | | |
|---|---|---|
| 82) | Երկնափեշյան Վովա Վազգենի | 20000 ՀՀ դրամ |
| 83) | Թամազյան Ծովիկ Հրանտի | 20000 ՀՀ դրամ |
| 84) | Սեփխանյան Քրիստինե Վաղարշակի | 20000 ՀՀ դրամ |
| 85) | Թանդիլյան Վերգուշ Սերոժի | 25000 ՀՀ դրամ |
| 86) | Ղազարյան Սամվել Վաղինակի | 20000 ՀՀ դրամ |
| 87) | Ավագյան Նվեր Սամվելի | 25000 ՀՀ դրամ |
| 88) | Բեջանյան Կարինե մարտունի | 20000 ՀՀ դրամ |
| 89) | Խաչատրյան Լուսինե Սոսիկի | 25000 ՀՀ դրամ |
| 90) | Ազատյան Արմեն Սուրենի | 20000 ՀՀ դրամ |
| 91) | Անանյան Վերգուշ Լևոնի | 20000 ՀՀ դրամ |
| 92) | Վարդամյան Միհեր Արշավիրի | 20000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| 93) | Ազատյան Անահիտ Ջահանի | 20000 ՀՀ դրամ |

94) Եգանյան Միշա Վերանի 50000 ՀՀ դրամ
95) Հախվերդյան Սերժիկ Սարիբեկի 20000 ՀՀ դրամ
96) Ամիրզյան Դավիթ Արարատի 100000 ՀՀ դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2495000 ՀՀ ԴՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 23 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 376-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀկառավարության 07.09.2006 թ N 1341-Ն ևՀՀկառավարության 29.12.2005 թ N 2387-Ն որոշումները և առաջնորդվելով ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով և 59-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բաղանիս բնակավայրի 11-017-0011-0062 ծածկագրով 0,2617 հա ընդհանուր մակերեսով տարածքից /նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման / առանձնացնել 0.1 հա մակերեսով հողատարածք՝ պետական գրանցում ստանալու նպատակով:

2.Առանձնացված 0.1 հա մակերեսով հողամասին և նրանում առկա շինությանը տալ հասցե՝ գրանցելով Նոյեմբերյան համայնք, բնակավայր Բաղանիս 9-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 23
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ
## 23 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 377-Ա

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ), ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 67-70-րդ, 77-80-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սահմանել՝

1) ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի աճուրդների կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2) ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մրցույթների կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3) ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրման կանոնակարգը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ և շարժական գույքի հրապարակային սակարկությունների վերաբերյալ տրվող հրապարակային

ծանուցումների ամբողջության, ներկայացված էլակետային տվյալներին համապատասխանության ապահովումն ու պատասխանատվությունը հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աճուրդային և մրցութային հանձնաժողովին:

3. Սույն որոշմամբ հաստատված կանոնակարգերի դրույթների կատարման աշխատանքների իրականացումը հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արմեն Ղուլիջանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՌԱՔԱԲՅԱՆ

2022 թ. հունիսի 23
ք. Նոյեմբերյան

Հավելված N1
ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի
2022թ. հունիսի 23-ի N որոշման 377-Ա

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդների կազմակերպման ու անցկացման հետ կապված գործընթացները և հողամասերը աճուրդային կարգով օտարման աշխատանքների կազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-70-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հրապարակային սակարկությունների մասին օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի, Նոյեմբերյան համայնքի ղեկավարի սույն որոշման պահանջներին և սույն կանոնակարգին համապատասխան:

2. Աճուրդները կազմակերպվում ու անցկացվում են Նոյեմբերյան համայնքի ղեկավարի սույն որոշմամբ ստեղծված՝ Նոյեմբերյանի համայնքապետարանի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների), Նոյեմբերյան համայնքի սեփականություն համարվող գույքի օգտագործման տրամադրման ու օտարման կազմակերպման և անցկացման հանձնաժողովի (այսուհետ հանձնաժողով)՝ կողմից:

3. Աճուրդը սակարկությունների ձև է, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին:

4. Աճուրդով սակարկությունների մասնակիցներ կարող են դառնալ ֆիզիկական և իրավաբանական անձինք (այսուհետ՝ անձինք), ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հանդիսանալ հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտ:

5. Աճուրդով սակարկությունների մասնակիցներ չեն կարող լինել այն անձինք, որոնք սակարկություններով վաճառվող լոտի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

6.Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի առարկա հանդիսացող առանձնացված հողամասերի վերաբերյալ տեղեկություններ են ստանում մամուլում (պարտադիր է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը) հրապարակվող հրապարակային ծանուցումներից, Նոյեմբերյանի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում տեղադրված տեղեկություններից, համապատասխան ինտերնետային կայքում (http://www.azdarar.am) տեղադրված տեղեկություններց:

7. Հետաքրքրող հողամասի վերաբերյալ տեղեկություններ անձինք կարող են ստանալ Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմից: Հայտերի ձևերը, աճուրդների կազմակերպման ընթացակարգը, համայնքի ղեկավարի համապատասխան որոշումը, հրապարակային ծանուցումները մատչելի և տեսանելի ձևով տեղակայված են այն *սենյակում*, որտեղ մուտքը քաղաքացիների համար ազատ է:

8. Հայտերի ձևերին, աճուրդների կազմակերպման ընթացակարգին ծանոթանալուց հետո, անձինք կարող են դիմել հանձնաժողովին հետաքրքրող առանձին հողամասերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

9. Անձանց ցանկության և պահանջի դեպքում աճուրդի կազմակերպչի կողմից նրանց տրամադրվում է աճուրդի կազմակերպման կանոնակարգի և հետաքրքրող հողամասի աճուրդային փաթեթը (ելակետային տվյալներ, գլխավոր հատակագծի օրինակ, ճարտարապետահատակագծային առաջադրանք, տիպային պայմանագրի օրինակ, հասցեի տրամադրման մասին տեղեկանքը)՝ պատճենահանման համար համապատասխան վճարում կատարելուց հետո:

10. Լոտի (լոտերի) ուսումնասիրման համար ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 48 (քառասունութ) ժամ:

11. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1) հայտ (հայտի ձևը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N 286 որոշմամբ),

2) աճուրդի մասնակցության համար տեղական վճարի վճարման անդորրագիր (վճարի չափը սահմանվում է Նոյեմբերյան համայնքի ավագանու կողմից),

3) անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:

12.Հայտերի ընդունման աշխատանքները և փաստաթղթերի ձևակերպումը ավարտելուց հետո հանձնաժողովի կազմակերպչի կողմից հայտատուին տրվում է կտրոն՝ հայտի ընդունման վերաբերյալ և տեղեկացվում է աճուրդին մասնակցելու համար տրվող նշահամարի ստացման ժամանակի մասին:

13.Հայտերն ընդունվում են բացառապես սույն կանոնակարգում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը $9^{00}$ -ից $18^{00}$ (ընդմիջում $13^{00}$ -$14^{00}$):

14.Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

15. Աճուրդի մասնակիցները մինչև աճուրդի օրը, ներառյալ աճուրդի անցկացման օրը, վճարում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

16. Աճուրդը անց է կացվում ք. Նոյեմբերյան, Երևանյան 4 հասցեում գտնվող Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում, հրապարակային ծանուցման մեջ նշված օրը և ժամին:

17.Նախավճարը վճարվելու դեպքում աճուրդի կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական, որտեղ նշվում է աճուրդի կազմակերպչի անվանումը, վճարված նախավճարի չափը, աճուրդի անցկացման վայրը (հասցեն) և ժամանակը:

18.Աճուրդի մասնակիցներին մասնակցի վկայականների տրամադրումը դադարում է աճուրդի բացումից 30 (երեսուն) րոպե առաջ:

*19. Աճուրդի անցկացման օրը հանձնաժողովը հերթական նիստում քննարկում է աճուրդի դրված հողամասերի մեկնարկային գնի նկատմամբ կիրառվող հավելաճի քայլի չափը (առանձնացված լոտերով, ոչ պակաս մեկնարկային գնի 50%-ից), որի մասին աճուրդավարը տեղյակ է պահում հայտատուներին յուրաքանչյուր լոտի համար սկսվող աճուրդից առաջ:*

20. Նախքան աճուրդի սկսելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը:

21. Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անունը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում հավելաճի քայլի չափը:

22. Հայտատուները աճուրդը սկսվելու պահից պետք է քայլ կատարեն հանձնաժողովի կողմից հաստատված հավելաճի քայլին պատիկ քայլի չափով՝ նշահամարի բարձրացման կարգով: Ցանկացած հայտատու իրավունք ունի, նախքան աճուրդավարի կողմից 3-րդ անգամ հավելաճի հայտարարված չափը կրկնելը, ներկայացնել նոր գնային հայտ՝ բարձրացնելով նշահամարը, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը:

23. Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացնող մասնակիցը, աճուրդավարի կողմից 3-րդ անգամ հայտարարված գնային հայտը կրկնելուց հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

24. Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

25.Աճուրդի արդյունքներով կամ դրա չկայացման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները և աճուրդի մասնակիցները:

26. Արձանագրությունը պահպանվում է աճուրդը կազմակերպող հանձնաժողովի կողմից:

27. Աճուդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարի գումարը, չի վերադարձվում մասնակցության վճարը: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ:

28. Աճուրդի հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

29.Աճուրդը չկայացած է համարվում, եթե հայտ չի ներկայացվել, կամ հաղթող ճանաչված անձը հրաժարվել է անշարժ գույքը ձեռքբերելուց կամ օրենքով սահմանված այլ դեպքերում: Այդ դեպքում աճուրդը պետք է հայտարարվի չկայացած ոչ ուշ, քան դրա անցկացման հաջորդ օրը: Աճուրդի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

30. Աճուրդը չկայանալու դեպքում կրկնաճուրդը կարող է հայտարարվել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, որոնց կրկնաճուրդը անց է կացվում 7 աշխատանքային օրվա ընթացքում:

31. Ընդունել ի գիտություն, որ աճուրդներն իրականացվում են բաց դասական, որին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68 հոդվածի 6-րդ կետի, մասնակցում են հանձնաժողովի անդամները, գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը:

6. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Աճուրդն անցկացվում է բաց, որին մասնակցում են հանձնաժողովի անդամները, ինչպես նաև գրանցված անձինք և աճուրդի մասնակից չհամարվող անձինք: Գրանցված անձինք սահմանված կարգով վճարում են մուտքի վճար, որի չափը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, և աճուրդը սկսվելու պահից 30 րոպե առաջ աճուրդային հանձնաժողովի կողմից գրանցվել են: Աճուրդի մասնակից չհամարվող անձինք աճուրդի գործընթացին մասնակցում են դիտորդի կարգավիճակով:

## II. ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

32. Աճուրդի անցկացման մասին կատարվում է հրապարակային ծանուցում՝ Հրապարակային ծանուցումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով, աճուրդից առնվազն մեկ ամիս առաջ:

33. Հրապարակային ծանուցումները պարունակում են.

1) աճուրդի կազմակերպչի անվանումը,

2) կազմակերպման վայրը (հասցեն),

3) հայտերի ընդունման ժամանակահատվածը՝ նշելով ժամերն ըստ օրերի,

4) աճուրդի ձևը և անցկացման կարգը,

5) լոտի նկարագրությունը (անվանումը),

6) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարի, աճուրդին մասնակցելու տեղական վճարի, նախավճարի չափը, ինչպես նաև դրանց վճարելու կարգը և ժամկետները,

7) աճուրդի ընթացակարգին և մյուս մանրամասներին ծանոթանալու վայրը և տրամադրելու կարգը,

8) հանձնաժողովի կողմից հաստատված աճուրդի պայմանները և պահանջները, որն իր մեջ ներառում է՝

ա. հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը,

բ. հողամասի չափը,

գ.հողամասի գտնվելու վայրը և ծածկագիրը, աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինը,

դ.հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը,

ե. գյուղատնտեսական հողատեսքերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պայմանները,

## III. ՍԱԿԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

34. Աճուրդի հաղթող ճանաչվում է ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

35. Աճուրդով սակարկություններում հաղթողի հետ արձանագրությունը ստորագրելու պահից նրան է անցնում համապատասխան լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

36. Աճուրդում հաղթած անձը արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում տվյալ լոտի համար ձևավորված գինը՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

37. Սակարկությունների արդյունքում ձևավորված գինը, հողամասերի ելակետային տվյալների, նախագծային փաստաթղթերի և հատակագծերի պատրաստման, հողամասերի հասցեավորման համար հաշվարկված վճարները ամբողջությամբ վճարելուց հետո 2 օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

2. Աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսից, իսկ կառավարության սահմանած դեպքում

ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, ծայրամասային բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 50 տոկոսից, իսկ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 30 տոկոսից:

Հավելված N2

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի

2022թ. հունիսի 23-ի N որոշման 377-Ա որոշման

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի մրցույթների կազմակերպման ու անցկացման հետ կապված գործընթացները և հողամասերը մրցութային կարգով տրամադրման աշխատանքների կազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-80-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-464-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հրապարակային սակարկությունների մասին օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման, Նոյեմբերյան համայնքի ղեկավարի սույն որոշման պահանջներին և սույն կանոնակարգին համապատասխան:

2.Մրցույթները կազմակերպվում ու անցկացվում են Նոյեմբերյան համայնքի ղեկավարի սույն որոշմամբ ստեղծված՝ Նոյեմբերյանի համայնքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների), Նոյեմբերյան համայնքի սեփականություն համարվող գույքի օգտագործման տրամադրման ու օտարման կազմակերպման և անցկացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից:

3.Մրցույթը սակարկությունների ձև է, որի ընթացքում հանձնաժողովի եզրակացությամբ հաղթող ճանաչվում է այն մասնակիցը, որը առաջարկել է լավագույն պայմանները:

4.Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի մրցույթները (այսուհետ՝ մրցույթ) անցկացվում են բաց, որին կարող է մասնակցել ցանկացած անձ:

5.Մրցույթի սակարկությունների մասնակիցներ կարող են դառնալ ֆիզիկական և իրավաբանական անձինք (այսուհետ՝ անձինք):

6.Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի առարկա հանդիսացող առանձնացված հողամասերի վերաբերյալ տեղեկություններ են ստանում մամուլում (պարտադիր է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը) հրապարակվող ծանուցումներից, Նոյեմբերյանի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում տեղադրված տեղեկություններից, համապատասխան ինտերնետային կայքում(http://www.azdarar.am) տեղադրված տեղեկություններց:

7.Հետաքրքրող հողամասի վերաբերյալ տեղեկություններ անձինք կարող են ստանալ Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմում: Հայտերի ձևերը, մրցույթների կազմակերպման ընթացակարգը, համայնքի ղեկավարի համապատասխան որոշումը, հրապարակային ծանուցումները մատչելի և տեսանելի ձևով տեղակայված են նշված սենյակում, որտեղ մուտքը քաղաքացիների համար ազատ է:

8. Հայտերի ձևերին, մրցույթների կազմակերպման կանոնակարգին ծանոթանալուց հետո, անձինք կարող են դիմել հանձնաժողովի քարտուղարին՝ հետաքրքրող առանձին հողամասերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

9.Անձանց ցանկության և պահանջի դեպքում մրցույթի կազմակերպչի կողմից նրանց տրամադրվում է մրցույթի կազմակերպման ընթացակարգի և հետաքրքրող հողամասի մրցութային փաթեթը (մրցույթին մասնակցել ցանկացողների կողմից ծրարով ներկայացվող փաստաթղթերի ցանկ, ելակետային տվյալներ, գլխավոր հատակագծի օրինակ, պետության կարիքների համար վերցված տարածքներում բնակելի և հասարակական նշանակության ներդրումային ծրագրերի իրականացման, իրացման աշխատանքների ավարտից հետո հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման մրցույթների դեպքում՝ հատակագիծ-սխեմա, ճարտարապետահատակագծային առաջադրանք, տիպային պայմանագրի օրինակ, հասցեի տրամադրման մասին տեղեկանքը)՝ պատճենահանման համար համապատասխան վճարում կատարելուց հետո:

10.Անձինք փաթեթին ծանոթանալուց, հողամասի սխեմատիկ ուսումնասիրությունից հետո տեղում (բնության մեջ) ընտրված տարածքին ծանոթանալու ցանկության դեպքում կարող են այցելել հողատարածք հանձնաժողովի նախագահի կողմից լիազորված համապատասխան մասնագետների ուղեկցությամբ:

11. Լոտի (լոտերի) ուսումնասիրման համար ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 48(քառասունութ) ժամ:

12. Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են.

1) սահմանված ձևի հայտ (հայտի ձևը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N 286 որոշմամբ),

2) քաղաքացիները՝ համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի (դրույքաչափը սահմանվում է համայնքի ավագանու կողմից) և համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի (դրույքաչափը սահմանվում է համայնքի ավագանու կողմից) վճարման անդորրագրերի օրինակները և անձնագիրը,

3) իրավաբանական անձինք՝ պետական գրանցման վկայականի և կանոնադրության հաստատված պատճենը, համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի (դրույքաչափը սահմանվում է համայնքի ավագանու կողմից) և համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի (դրույքաչափը սահմանվում է համայնքի ավագանու կողմից) վճարման անդորրագրերի օրինակները,

4) մրցույթի անցկացման ծանուցման մեջ նշված չափով նախավճարի վճարման անդորրագրի օրինակը:

13. Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված և (կամ) ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված թվով կրկնօրինակներից:

14. Մրցույթի մասնակիցները պատասխանատվություն են կրում իրենց ներկայացրած փաստաթղթերի արժանահավատության համար:

15. Մրցույթի հայտը հանձնաժողովի կողմից գրանցվում է առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը:

16. Հայտերի ընդունման աշխատանքները և փաստաթղթերի ձևակերպումը ավարտելուց հետո համապատասխան աշխատակցի կողմից հայտատուին տրվում է կտրոն հայտի ընդունման վերաբերյալ և տեղեկացվում է մրցույթին մասնակցելու համար տրամադրվելիք մասնակցի վկայականի ստացման ժամկետը:

17. Հայտերն ընդունվում են բացառապես սույն ընթացակարգում նշված փաստաթղթերի ներկայացումից հետո, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը $9^{00}$-ից $18^{00}$ (ընդմիջում $13^{00}$-$14^{00}$):

18. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

19. Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի օրը, ներառյալ մրցույթի անցկացման օրը, վճարում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

20. Մրցույթը անց է կացվում ք. Նոյեմբերյան, Երևանյան 4 հասցեում գտնվող Նոյեմբերյանի համայնքապետարանի վարչական շենքում, հրապարակային ծանուցման մեջ նշված օրը և ժամին:

21. «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը, ինչպես նաև մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված մրցույթի հայտերն առանց բացվելու մերժվում են և վերադարձվում են ներկայացնողին:

22. *Մրցույթի մասնակից չհամարվող անձանց համար սահմանել մուտքի վճար 3000 (երեք հազար) դրամի չափով:*

23. Մրցույթի մասնակիցներին մասնակցի վկայականների տրամադրումը, ինչպես նաև մրցույթի մասնակից չհամարվող անձանց տոմսերի վաճառքը դադարում է աճուրդի բացումից 30 (երեսուն) րոպե առաջ:

24. Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու ժամկետի ավարտը, կարող են փոխել կամ հետ վերցնել հայտերը:

25. Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով՝ «փոփոխում» բառը:

26. Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են մրցույթի հայտերը ուղարկել պատվիրված նամակով:

27. Մասնակիցները կարող են նույն կարգով հետ վերցնել մրցույթի հայտը:

28. Մրցույթի արդյունքներն ամփոփելիս և հաղթողին որոշելիս՝ մրցութային հանձնաժողովը հաշվի է առնում առաջարկվող լավագույն պայմանները:

Առանձին դեպքերում կարող են հաշվի առնվել նաև՝

1)բիզնես ծրագիրը և հողամասի օգտագործման տեխնիկատնտեսագիտական հիմնավորումները,

2)հողերի բարելավման, կուլտուր-տեխնիկական միջոցառումների իրականացման, նոր հողերի յուրացման, բնապահպանական և պատմամշակութային միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունները,

3)արտադրության կազմակերպման, քաղաքաշինական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը, օբյեկտի կարճ ժամանակում կառուցման և շահագործման հնարավորությունը,

4)հողամասի ռացիոնալ օգտագործման երաշխիքները, տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, ազատ աշխատուժի օգտագործման նախատեսումը,

5)տվյալ համայնքի մշտական բնակիչ լինելու կամ իրավաբանական անձի գրանցման հանգամանքը:

29. Մրցութային հանձնաժողովը բացում և գնահատում է մրցույթի հայտերը և որոշում է մրցույթի հաղթողին:

30. Մրցութային հանձնաժողովը որոշումներ է ընդունում ձայների պարզ մեծամասնությամբ:

31. Մրցութային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որը ստորագրվում է հանձնաժողովի անդամների և մրցույթում հաղթողի կողմից:

32. Մրցույթի հաղթողին որոշելիս առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք:

33. Արձանագրության մեջ նշվում են մրցույթի հաղթողի տվյալները, հողամասի վարձակալության (կառուցապատման) ժամկետները, հողամասի և վարձավճարի (կառուցապատման վճարի) չափերը, հողամասի օգտագործման նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի օգտագործման պայմանները, մրցույթի հաղթողին տրվող իրավունքները, ինչպես նաև մրցույթում սահմանված մյուս պայմանները:

34. Տրամադրված հողամասի դիմաց գանձվող վարձավճարի կամ կառուցապատման վճարի չափը և վճարման պայմանները սահմանվում են պայմանագրով՝ մրցույթի արդյունքների հիման վրա:

35. Եթե մասնակիցը մրցույթում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվում է նրան:

36. Մրցույթում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

37. Մրցույթի հայտերը բացվում են մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված օրը և ժամին, մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում:

38. Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են.

1) մրցույթի հայտ ներկայացրած յուրաքանչյուր անձի ծածկանունը, իսկ եթե տվյալ անձը չի առարկում, ապա նաև նրա անունը (անվանումը),

2) մրցույթի հայտեր ներկայացնելու համապատասխանությունը օրենքի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին,

3) ամփոփ տվյալներ՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

39. Մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին, ծանոթանալ մրցույթի նիստերի արձանագրություններին:

40. Մրցույթի հայտերն ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշվում է՝

1) մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները,

2) մրցույթի մասնակիցների անունները (անվանումները) և գտնվելու (բնակության) վայրը,

3) տեղեկություններ՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին,

4) մրցույթում հաղթողի անունը (անվանումը),

5) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

41. Մրցութային հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

